

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ՝ Ուշադրությունը կենտրոնացնող խաղերը ուսումնառության առաջին տարում

Կազմեց՝ Քնար Սամվելի Ասատրյան  
(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Ա. Մարգարյանի անվան N 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ  
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ  
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3
2. Գլուխ 1 Ուշադրությունը որպես հոգեկան գործընթաց	5
1. 1 Ուշադրության տեսակները	5
1. 2 Ուշադրության խանգարումներ ունեցող սովորողների զարգացման առանձնահատկությունները	7
1. 3 Ուշադրության խանգարումների առկայության մասին նախազգուշացնող ազդակներ	9
1. 4 Ուշադրության խանգարումներ ունեցող սովորողների ներառումը դասարանում խթանելու արդյունավետ ռազմավարություններ	10
3. Գլուխ 2 Խաղը կայծ է, որը վառում է պրպտումի և հետաքրքրասիրության կրակը. . .	13
2. 1 Խաղը որպես ուշադրության կենտրոնացման միջոց	13
2. 2 Խաղեր ուշադրությունը կենտրոնացնելու համար	18
4. Դասի պլան՝ «Մեկ» թվի գրությունը թվանշանով	23
5. Եզրակացություն	26
6. Օգտագործված գրականության ցանկ	27
7. Հավելված	28

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ես նայեցի շուրջս ու չտեսա  
Իմ երազանքի ավտոմեքենան՝ որոշեցի ինքս նախագծել այն»

Ֆերդինանդ Պորշե

Մարդու իմացական գործընթացները, հոգեկան ակտիվությունն  
ընդհանրապես, ունի մի ներքին հատկություն, որն անվանում են  
**ուշադրություն:**

Ուշադրություն դարձնել ինչ-որ առարկայի վրա՝ նշանակում է հոգեկան  
գործունեությունն ուղղել դեպի այդ առարկան՝ վերջինիս դարձնելով մեր  
իմացական և հուզական գործընթացների բովանդակությունը:

Եթե մարդն ունի որևէ ակտիվացված պահանջմունք (օրինակ՝ սնվելու,  
ծարավը հագեցնելու, իմացական, ինքնահաստատման և այլն), իր  
ուշադրությունն ինքնաբերաբար գրավում են այն երևույթները, որոնք նրա  
համար նշանակալից են, այսինքն կարող են բավարարել նրա այս կամ այն  
պահանջմունքը:

Օրինակ՝ սնվելու պահանջմունքի կոնկրետ դրսևորման՝ քաղցի ազդեցության  
տակ մարդը հատկապես ուշադիր է դառնում սննդամթերքի նկատմամբ:  
Մտունդը նրա համար հատուկ նշանակություն է ստանում, դառնում է  
նշանակալի, և դրանով իսկ, առանց հատուկ նպատակադրման ու ջանքերի,  
գրավում է մարդու ուշադրությունը. այսպիսով, երբ մարդն ունի զարգացած  
իմացական պահանջմունք, իր ողջ ուշադրությունն ուղղում է այդ  
պահանջմունքի բավարարմանը: Նույնիսկ փողոցում լինելու դեպքում,  
կենտրոնացնելով ողջ ուշադրությունը, կփնտրի մոտակա սնման կետը  
ուտելու ինչ-որ բան գտնելու համար, կամ երբ անձը պահանջմունք ունի  
կրթվելու՝ համացանցում հազարավոր այլնտրանքների միջից կնկատի մի  
հետաքրքիր հոդված և կընթերցի այն մեծ ուշադրությամբ:

Այսպիսով, եթե մարդն ունի որևէ ակտիվացված պահանջմունք, ապա նա կարող է որոնել ու գտնել, ուշադրության առարկա դարձնել այն ամենը, ինչը կարող է բավարարել այդ պահանջմունքը:

Իսկ երբ մարդն իր ուշադրությունը կենտրոնացնում է որոշակի արկաների վրա, ապա դրանց ընկալումը դառնում է ավելի **հստակ ու մանրամասն**: Փաստորեն կենտրոնացված ուշադրությամբ ուղեկցվող մտածողությունը մարդուն ավելի շատ ինֆորմացիա է տալիս՝ օգնելով հայտնաբերել առարկայի կամ երևույթի ավելի **խորը, անմիջական ընկալման համար անմատչելի** հատկություններ:

*Այսպիսով, ուշադրությունն անհրաժեշտ է անձի համար էական նշանակալից օբյեկտների վրա հոգեկան գործունեությունը ընտրականորեն ուղղելու, ժամանակավորապես այլ երևույթներից կտրվելու և իր գործունեության նպատակներին հասնելու համար:*

*1. 1 ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ*

*Ուշադրությունը լինում է ներքին և արտաքին, ոչ կամաձին, կամաձին և հետ կամաձին:*

**Ներքին ուշադրությունը** մարդու հոգեկան գործունեության ուղղվածությունն է դեպի սեփական ներաշխարհի բովանդակությունները, սեփական ապրումներն ու մտքերը:

Այն երբեմն անվանում են **ինտելեկտուալ** (բանական) ուշադրություն:

Օրինակ, որևէ խնդիր լուծելիս մարդն իր ուշադրությունը կարող է այնպես կենտրոնացնել նրա բովանդակության վրա, որ գիտակցության մակարդակում կտրվի շրջապատից և արտաքին աշխարհի երևույթներից:

Եթե ներքին ուշադրության օբյեկտները մարդու հիշողության բովանդակություններն են, հուշերը, ապա նա կարող է խոր հուզականությամբ վերապրել դրանք, «մտքով տեղափոխվել անցյալ» և չնկատել, թե ինչ է կատարվում շրջապատում:

**Արտաքին ուշադրությունը** մարդու ուղղվածությունն է դեպի արտաքին աշխարհի առարկաներն ու երևույթները:

Այն երբեմն անվանում են **զգայական՝ սենսորային** ուշադրություն, որն էլ իրագործվում է զգայարանների օգնությամբ:

Մարդու կյանքում հատկապես կարևոր են տեսողական և լսողական ընկալումները, և մենք կարող ենք խոսել տեսողական և լսողական ուշադրության գոյության մասին:

Օրինակ՝ մենք ուշադրությամբ լսում ենք ինչ-որ ձայներ կամ ուշադրությամբ նայում ենք ինչ-որ բանի, այսինքն մենք մեր հոգեկան ուղղվածությունն ենք հանդես բերում այդ տեսակներն իրագործելիս:

*Ոչ կամաձին* է կոչվում այն ուշադրությունը, որն առաջ է գալիս մարդու կամքից անկախ, ինքնաբերաբար, առանց գիտակցական նպատակադրման: Ոչ կամաձին ուշադրություն դրսևորելիս մարդը ճիգեր չի գործադրում:

Ուշադրության այս տեսակը հատուկ է նաև կենդանիներին:

*Կամաձին ուշադրությունը* բնորոշ է միայն մարդուն: Դա մարդու գիտակցական կենտրոնացումն է որոշակի օբյեկտի, ինֆորմացիայի վրա որոշակի կամային ջանքերի գործադրման շնորհիվ: Կամաձին ուշադրությունը մեր կամքի դրսևորումն է, որոշում կայացնելիս մենք կատարում ենք այդ որոշումը՝ գիտակցորեն ուշադրություն դարձնելով նույնիսկ այն բանի վրա, ինչը տվյալ պահին մեզ չի հետաքրքրում, բայց որով զբաղվելը մենք անհրաժեշտ ենք համարում: Կամաձին ուշադրությունը միջնորդվում է գիտակցորեն դրված նպատակներով:

*Հետկամաձին ուշադրությունը* ունի այնպիսի գծեր, որոնց մի մասը հատուկ է կամաձին ուշադրությանը, իսկ մյուս մասը՝ ոչ կամաձին ուշադրությանը: Սակայն, ընդհանուր առմամբ, այն չի համընկնում դրանցից որևէ մեկի հետ:

Ի տարբերություն **ոչ կամաձին** ուշադրության՝ **հետկամաձին** ուշադրությունը կապված է գիտակցական նպատակների և հետաքրքրությունների հետ և, ի տարբերություն **կամաձին** ուշադրության, նրանում բացակայում են կամաձին ճիգերը:

- *արտաքին*՝ մարդու հոգեկան գործունեությունն ուղղված է **դեպի արտաքին** աշխարհը,
- *ներքին*՝ մարդու հոգեկան գործունեությունն ուղղված է **դեպի իր** ներաշխարհը,
- *ոչ կամաձին*՝ մարդը **ինքնաբերաբար**, իր կամքից անկախ ուշադրություն է դարձնում որևէ երևույթի վրա,
- *կամաձին*՝ մարդը **կամքի լարումով** իր հոգեկան գործունեությունն է ուղղում որևէ առարկայի կամ երևույթի վրա,
- *հետկամաձին*՝ **ծնվում** է որպես կամաձին ուշադրություն և ապա, հետաքրքրության առաջացման շնորհիվ, դառնում ոչ կամաձին

## *1.2 ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ*

### *ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Ուշադրության տևական պահպանումը հնարավորություն է տալիս հասնել մեր առջև դրված նպատակներին: Ուշադրությունը կենտրոնացած պահելու կարողությունը մտավոր և ստեղծագործական աշխատանքում շոշափելի արդյունքների հասնելու կարևոր պայմաններից է: Ուշադրության կենտրոնացման դժվարություններն առավել հաճախ արտահայտվում են նախադպրոցական կամ վաղ դպրոցական տարիքում: Շատ կարևոր է հստակ կարողանալ տարանջատել ուշադրության կենտրոնացման հետ կապված խանգարումները սովորողի տարիքային զարգացման առանձնահատկություններին բնորոշ ցրվածությունից:

Ուշադրության կենտրոնացման դժվարություններ ունեցող սովորողները չեն կարողանում երկարատև կենտրոնանալ դասապրցեսին, նրանք հեշտությամբ շեղվում են կողմնակի գործոններից, մի գործողությունից արագ անցում են կատարում մյուսին, քանի որ դժվարանում են երկար ժամանակ կենտրոնանալ միևնույն առաջադրանքի կատարման վրա: Հասակակիցների հետ համատեղ գործողությամբ զբաղվելը զգալի մարտահրավեր է ուշադրության խանգարումներ ունեցող սովորողի համար, քանի որ այդ ընթացքում պետք է պահպանել մի շարք կանոններ, կատարել հաջորդական գործողություններ:

Ուշադրության խանգարումները կարող են կապված լինել գերհոգնածության, սթրեսային վիճակների, առողջական խնդիրների, իսկ ավելի հաճախ հիմնական հատկանիշների՝ կենտրոնացվածության, կայունության, ստեղծագործականության, ծավալի, բաշխվածության, փոփոխությունների հետ:

***Ցրվածությունը*** ուշադրության ամենից տարածված դժվարությունն է. օրինակ՝ եթե երեխան փորձում է վերհիշել անցյալի որևէ իրադարձություն, ապա կենտրոնանալով մի գործունեության վրա՝ կարող է չլսել հրահանգը,

չնկատել միջավայրից եկող ձայները, մարդկանց, տարբեր տեղաշարժերը, դժվարանում է միևնույն ժամանակ կենտրոնանալ մի քանի օբեկտների վրա:

Ուշադրությունը երբեմն լինում է **մակերեսային**, այն անընդհատ տարածվում է արտաքին շեղող ազդակների վրա: Ուսուցման ընթացքում երեխայից պահանջվում է ուշադրությունը նպատակահարմար կերպով բաշխել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին օբեկտների ու ազդակների վրա:

**Կայունության** խանգարման դեպքում երեխան չի կարողանում պահանջված ժամանակահատվածով կենտրոնացնել իր ուշադրությունն ապա կամ այն գործունեության վրա, դժվարանում է երկարատև ինչ-որ գործունեությամբ զբաղվել, առաջադրանքի վրա ուշադրությունը կենտրոնացած է պահում է կարճ ժամանակով: Որոշ դեպքերում էլ երեխան կենտրոնանում է մի գործողության, առարկայի կամ երևույթի վրա և չի կարողանում ուշադրությունը տեղափոխել մեկ այլ գործունեության վրա. դա **տեղափոխելիության** խանգարումն է: Ուշադրության կենտրոնացման խանգարումներից է նաև ընտրողական ուշադրությունը, որը սահմանափակում է երեխայի հնարավորությունները՝ թույլ չտալով կենտրոնանալ առաջադրանքի վրա, օրինակ՝ սովորողն ուշադրությունը պահում է իրեն հաճելի օբեկտների վրա, բայց ոչ ուսուցչի ներկայացրած առաջադրանքների: Երբեմն հանդիպում է **ուշադրության ծավալի նեղացում**, երբ առաջադրանքի իրականացման ընթացքում հաշվի են առնվում ներկայացված պահանջներից միայն մի քանիսը, և անտեսվում են մյուսները:



*1.3 ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱԼՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՆՈՂ ԱԶԴԱԿՆԵՐ*

*Ուշադրության խանգարումներ ունեցող սովորողը դժվարանում է՝*

- կենտրոնացած պահել ուշադրությունը երկար ժամանակ
- կենտրոնանալ մանրուքների վրա
- իրականացնել բարդ հրահանգները. հաշվի են առնվում ներկայացված պահանջներից միայն մի քանիսը, մյուսներն անտեսվում են
- տեղափոխել ուշադրությունը. մի առաջադրանքը չավարտած՝ կարող է անցում կատարել հաջորդին
- ընկալել լսածը տեսնելուն գուգահեռ կամ հակառակը
- պահանջված ժամանակահատվածով կենտրոնացնել իր ուշադրությունն այս կամ այն գործունեության վրա
- միևնույն ժամանակ կենտրոնանալ մի քանի առարկաների կամ գործողությունների վրա
- լսել կամ նայել զրուցակցի դեմքին
- ավարտին հասցնել դասարանային և դպրոցական հանձնարարությունները
- հետևել իր անձնական իրերին, որոնք անհրաժեշտ են ամենօրյա առաջադրանքները կատարելու համար (գրիչ, մատիտ, տետր և այլ)
- կենտրոնացած մնալ. շեղվում է արտաքին ազդակներից (նման դեպքերում կարող է ընդհանրապես մոռանալ, թե մինչև այդ ինչ գործողությամբ էր զբաղված
- հիշել և կատարել առօրյա գործողությունները
- ինքնուրույն կատարել հանձնարարությունները (մշտապես ունի օգնության կարիք)

- ներգրավված մնալ խմբային խաղերում, աշխատանքներում խմբից հետ մնալու պատճառով
- կատարել գրավոր առաջադրանքներ. անփութության, անուշադրության պատճառով թույլ է տալիս սխալներ (օրինակ՝ կարող է բաց թողնել տառեր, վանկեր, նախադասություններ)
- երկարատև հետաքրքրված և մոտիվացված մնալ. ձանձրանում և հիասթափվում է միանման, կրկնվող գործողություններից
- կատարել երկարատև ժամանակ և հաջորդական քայլեր պահանջող առաջադրանքներ
- պատասխանել հարցերին. մինչև վերջ չի լսում հարցը, հաճախ շեղվում է հարցի բուն իմաստից
- երկարատև աշխատել. առաջանում է հանգստի կամ գործունեությունը փոխելու պահանջ, քնկոտություն, անհանգստություն
- սեփական մտքերը շարադրել, տրամաբանական ավարտի հասցնել:

*1. 4 ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ  
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԽԹԱՆԵԼՈՒ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ուշադրության խանգարումներ ունեցող սովորողների կրթության մատչելիությունն ու հասանելիությունն ապահովելու համար կարելի է կիրառել հետևյալ ռազմավարությունը՝

- նվազեցնել շրջակա միջավայրից եկող շեղող ազդակների քանակը
- նվազեցնել առաջադրանքների քանակը
- անհրաժեշտության դեպքում կրկնել առաջադրանքների պահանջները

- բարդ և մեծ ծավալ ունեցող առաջադրանքները բաժանել մասերի, որպեսզի սովորողը հնարավորություն ունենա կատարել դրանք մաս-մաս կամ փուլերով
- տրամադրել առաջադրանքի արդեն կատարված օրինակ կամ դրանցից մեկը կատարել սովորողի հետ միասին
- տրամադրել լրացուցիչ ժամանակ հանձնարարությունները կատարելու և ավարտին հասցնելու համար
- դադարներ սահմանել յուրաքանչյուր առաջադրանքից հետո, որպեսզի սովորողը կարողանա նախապատրաստվել հաջորդին
- նոր հանձնարարությունը տալ միայն այն ժամանակ, երբ սովորողն արդեն ավարտել է նախորդը
- կիրառել ոչ խոսքային ազդանշաններ դասի կամ յուրաքանչյուր այլ գործողության մեկնարկն ազդարարելու համար (օրինակ՝ ձեռքի զանգ, ծափ, թակոց, երաժշտություն և այլն)
- մշակել մի քանի նախազգուշացնող ազդակներ, օրինակ՝ ժեստեր, կաշուն թղթեր, հայացք կամ դիմախաղ, որպեսզի կարողանաք դրանց միջոցով աննկատ հուշումներ կամ զգուշացումներ անել
- հերթագայել սովորողի համար հետաքրքիր և անհետաքրքիր առաջադրանքները
- նախապես զգուշացնել սովորողին նոր գործունեության մասին, օգնել նախապատրաստվել, ներկայացնել գործողությունների պլան, առաջադրանքը կատարելու սխեման, հատկացված ժամանակը և այլն
- ուսումնական նոր նյութը և ստուգողական աշխատանքի առաջադրանքը տալ դասապրոցեսի այն հատվածում, երբ սովորողն առավել աշխատունակ է
- այն սովորողներին, ովքեր ունեն ուշադրության խանգարումներ, նստեցնել ուսուցչական սեղանին հնարավորինս մոտ, ինչն ավելի զգոն կդարձնի նրանց
- հրահանգները ձևակերպել պարզ, հստակ շեշտադրումներով և համապատասխան առոգանությամբ

- չէջտադրել անուշադրության հետևանքով սովորողի թույլ տված սխալները
- թույլ տալ սովորողին առաջադրանքների կատարման ընթացքում օգտվել նախօրոք պատրաստված հուշումներից
- զարգացնել սովորողի ինքնուրույն սովորելու և աշխատելու հմտությունները
- չպահանջել սովորողից կատարել հանձնարարությունը, երբ նա հոգնած է և չի ընկալում նյութը
- ընդգծել սովորողի առաջընթացը, հետևել կրթության մեջ դրական տեղաշարժին
- օգտագործել ժամանակի չափման որևէ միջոց՝ որպես հուշում սովորողին, թե որքան ժամանակում պետք է ավարտին հասցնել առաջադրանքը:

*ԳԼՈՒԽ 2 ԽԱՂԸ ԿԱՅԾ Է, ՈՐԸ ՎԱՌՈՒՄ Է ՊՐՊՏՈՒՄԻ և  
ՀԵՏԱՔՐՔՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԸ . . .*

*Վ. Ա. ՍՈՒԽՈՒՄԼԻՆՍԿԻ*

## *2. 1 ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՄԻՋՈՑ*

Բոլոր ժամանակներում էլ երեխաները ձգտել են խաղալ . . . Դա ինքնարտահայտման, ինքնակայացման, ինքնակատարելագործման, աշխարհը և իրենք իրենց ճանաչելու հրաշալի միջոց է:

Հոգեբանների կարծիքով խաղը, երեխայի հոգեկան գործառույթների զարգացման կարևոր միջոց է: Այն տալիս է երեխայի գործառույթային ուժերը ակտիվացնելու և դրանք ազատ դրսևորելու հնարավորություն: Որքան էլ տարբեր ինեն խաղի վերաբերյալ մոտեցումներն ու ձևավորված տեսությունները, անվիճելի է, որ խաղը երեխաների զարգացման հրաշալի միջոց է: Այն նաև դաստիարակության անփոխարինելի միջոց է: Խաղի միջոցով ձևավորվում են գրեթե բոլոր այն որակներն ու հատկությունները, որոնք անհրաժեշտ են մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Օրինակ՝ դժվար է պատկերացնել այն մարդու կյանքը, ով չունի մարդկանց հետ շփվելու, հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, երևակայություն, տրամաբանություն, համբերատարություն, արագ կողմնորոշվելու, ճիշտ լուծումներ գտնելու ունակություն, ուրիշներին օգնելու պատրաստակամություն և այլն:

Խաղը մարդու գործունեության մյուս տեսակներից տարբերվում է նրանով, որ բացառում է հարկադրանքի տարրը: Պարտադրել երեխային խաղալ նշանակում է այդ գործընթացը դարձնել նրա համար անիմաստ և անհետաքրքիր: Երեխան պետք է բացարձակ կամովին ընդգրկվի խաղում կամ

դուրս գա խաղից: Նա պետք է ազատ լինի « ուզում եմ խաղալ » կամ « չեմ ուզում » հարցերի ընտրության մեջ:

Չնայած խաղային գործունեությունը բնութագրվում է ազատ ընտրության հնարավորությամբ, այն չի պահանջում կամային լարում, դժվարությունները հաղթահարելու ուժ և կարողություն: Ընդհակառակը, « հենց խաղն է հնարավորություն տալիս, որ երեխայի զարգացող ուժերը գտնեն այն սահմանները, որոնց հաղթահարման դեպքում էլ կատարվում է իրական զարգացումը »<sup>1</sup>: Այսինքն՝ խաղը սուկ հաճույք, զվարճանք չէ, այլ բավական լուրջ գործունեություն:

Նշեմ որոշակի գործառույթներից մի քանիսը, որ իրականացնում է խաղը՝ որպես գործունեության տեսակ:

1. Խաղը թեթևացնում է սխալների և անհաջողությունների ազդեցությունը: Լինելով գործունեության բավականին լուրջ տեսակ՝ այն միևնույն ժամանակ երեխայի մեջ չի առաջացնում հիասթափություն, անհաջողության զգացողություն: Այսօր մանկավարժության մեջ տարածված է այն կարծիքը, որ իբր խաղ – մրցույթները ոչ թե օգտակար, այլ, ընդհակառակը, վնասակար են և նույնիսկ « հակամանկավարժական »: Դա բացատրվում է խաղում հաղթողների և պարտվողների առկայությամբ: Լավ է, որ կան հաղթողներ, բայց պարտությունը լուրջ հետևանքներ է ունենում. այն պատճառ է դառնում երեխաների ցածր ինքնագնահատականի ձևավորման համար: « Իրական խնդիրն այն չէ, թե ինչն է լավ՝ ցածր, թե բարձր ինքնագնահատականը, կարևոր է, որ այն լինի համարժեք, այսինքն՝ որ երեխան հստակ գնահատի իր իրական ուժերն ու հնարավորությունները »: Հենց դա է պատճառը, որ երեխան պետք է խաղա և խաղի ընթացքում ձևավորի իսկական, բազմակողմանի ինքնագնահատական: Իհարկե, շատ կարևոր է, որ երեխան խաղա ոչ թե մեկ, այլ տարբեր խաղեր, ոչ թե մեկ, այլ տարբեր մարդկանց հետ: Խաղերի ու խաղընկերների բազմազանության պայմաններում երեխան մե՛կ

կպարտվի, մե՛կ հաղթող կճանաչվի՝ հնարավորություն ստանալով կողմնորոշվելու՝ ինչ գիտի և կարող է անել ինքը, իսկ ինչը՝ ոչ:

2. Խաղը անփոխարինելի միջոց է երեխայի երևակայությունը զարգացնելու համար: « Խաղի անհրաժեշտ բաղադրամասը՝ երևակայվող իրադրությունը, որը ներմուծվում է « եթե » բառի օգնությամբ, երեխայի կողմից կուտակված մտապատկերների, տրամաբանության կանոնների և ճշմարտանմանության պահանջների կողմից չճնշված ձևափոխություն է: Երևակայական պատկերն այստեղ հանդես է գալիս որպես խաղային գործունեության ծրագիր »: Ճիշտ չէ այն կարծիքը, թե խաղալիս երեխաները չունեն որոշակի նպատակ: Բանն այն է, որ խաղի ընթացքում երեխաները հաճախ փոխում են իրենց նպատակները՝ համապատասխանեցնելով դրանք նոր միջոցների, կամ ընդհակառակը՝ փոխում են միջոցները՝ հարմարեցնելով դրանք նոր նպատակների: Հետաքրքիրն այն է, որ նման վերափոխությունները հիմնականում պայմանավորված են ոչ թե անսպասելի կամ անհաղթահարելի արգելքներով, այլ ուղղակի մանկական երևակայության թռիչքով:

Շատ հետաքրքիր և մանկական խաղին բնորոշ է այն, որ խաղի վերջնական արդյունքը երեխաներն այնքան էլ չեն կարևորում: Իրենց համար աննկատ՝ երեխաները, խաղի միջոցով սնելով իենց երևակայությունը, խորացնում և ամրապնդում են անձի շատ արժեքավոր հատկություններ՝ համարձակությունը, վճռականությունը, կազմակերպվածությունը, հնարամտությունը և այլն: «Այսպիսով՝ խաղը հանդես է գալիս ոչ միայն որպես հետազոտության միջոց, այլ նաև որպես հնարամտության դրսևորման ձև »:

3. Մանկական խաղը հազվադեպ է լինում քառսային կամ պատահական: Հոգեբանների դիտումները ցույց են տվել, որ նույնիսկ այն ժամանակ, երբ երեխաները խաղում են մենակ՝ առանց մեծերի անմիջական ղեկավարման, նրանք ինքնուրույն որոշում, սահմանում և անառարկելիորեն ենթարկվում են խաղի կանոններին: Պատահական չէ, որ տարբեր հոգեվիճակներում երեխան ընտրում է միանգամայն տարբեր խաղեր, քանի որ ամեն խաղ ինչ-որ բան

է խորհրդանշում, և հաճախ այն պարզ ցույց է տալիս երեխայի հոգում կատարվող այս կամ այն գործընթացը:

4. Խաղային գործունեությունը բացառիկ նշանակություն ունի մարդկանց մտավոր և ֆիզիկական զարգացման համար: Այն և՛ երեխայի, և՛ մեծահասակի համար մտավոր ներուժի օգտագործման լավագույն միջոց է, հիմք, որի վրա փորձարկվում, կիրառվում են մտածողության, խոսքի, երևակայության պտուղները: Խաղի ժամանակ երեխան ոչ միայն սովորում ու զարգանում է, այլև խաղային այս կամ այն իրավիճակում կիրառում, կատարելագործում, ամրակայում է վաղօրոք սովորածը, հմտությունների է վերածում իր կարողությունները: Այնպես, ինչպես բույսերը կարող են խեղդվել այգում տեղի անբավարարությունից, այդպես էլ հնարավոր է երեխաների հետ աշխատելիս ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ մտածողությունն ու խոսքը չեն զարգանա, և չի ստացվի սպասված արդյունքը: Ռ. Կոեյը և Գ. Մեյեսը, ուսուցիչները և երեխաների և նույնիսկ հասուն մարդկանց ստեղծագործական գործունեությանը, պարզել են, որ «... խաղային տարրերի ներմուծումը, որպես կանոն, ակտիվացնում է կոգնիտիվ մեխանիզմներն ու զգացմունքային գործընթացները (խաղային գործունեության մոտիվացիայի բարձր մակարդակ) և հանգեցնում է հնարավոր առավելագույն կենտրոնացմանն ու մոբիլիզացմանը»:

Չնայած այն բանին, որ խաղը երեխայի համար բնական պահանջմունք է, ազատ գործունեություն, մենք հաճախ այն օգտագործում ենք մեր կողմից հետապնդվող այս կամ այն, այդ թվում նաև ուսումնաճանաչողական նպատակների հասնելու համար: Անկախ այդ նպատակներից՝ անհրաժեշտ է նախ և առաջ մեծ ուշադրություն դարձնել խաղի ազատության, սպոնտանության պահպանմանը՝ հետևելով, որ երեխան խաղալիս չկաշկանդվի, չձգվի, հաճույք ստանա իր խաղից, բայց և ծանոթ լինի և հետևողականորեն պահպանի խաղի կանոնները:

Խաղը ուսուցչի օգնականն է ուսումնական գործունեությունը երեխաների համար հետաքրքրաշարժ և հաճելի դարձնելու, նրանց հոգնածությունը և



լարվածությունը թուլացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու,  
մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու գործում:

Խաղերը բազմաթիվ են ու բազմազան: Մակայն խաղերի ճիշտ ընտրության  
ու կազմակերպման դեպքում դրանք անդավաճան զինվորների նման  
կծառայեն թե՛ երեխաներին, թե՛ նրանց հետ աշխատող մեծահասակներին:

## 2. 2 ԽԱՂԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### 1. Գտի՛ր տարբերությունը

Նպատակը՝ տեսողական ուշադրության զարգացում:

Դիտակտիկ նյութեր՝ նկարների շարք:

Ընթացքը՝ երեխաներին տրվում է հրահանգ. «Ուշադիր դիտեք նկարները և նշեք դրանց տարբերությունները»:

Առաջադրանքը արդյունք կտա, եթե սկսենք պարզ նկարներից՝ աստիճանաբար բարդացնելով:










## 2. ՈՐ ՎԱՆԴԱԿՈՒՄ ԵՄ ԵՍ

Նպատակը՝ տրամաբանության և տեսողական ուշադրության զարգացում:

Դիտակտիկ նյութեր՝ նկարների և քարտերի շարք:

Ընթացքը՝ երեխաներին տրվում է հրահանգ. « Ուշադիր դիտեք նկարները և ճիշտ տեղադրեք քարտերը »:








### 3. ԵԿԵՔ ԳՈՒՆԱՎՈՐԵՆՔ

Նպատակը՝ տեսողական ուշադրության զարգացում:

Դիտակտիկ նյութեր՝ պատկերների և քարտերի շարք:

Ընթացքը՝ երեխաներին տրվում է հրահանգ. «Ուշադիր դիտեք պատկերները և ճիշտ գունավորեք քարտերը»:



#### 4. ՄՆԿԵՐ

**Խաղի նպատակը՝** արագաշարժության, ուշադրության զարգացում:

**Խաղի կահավորումը՝** գետնին կավճով գծել մեծ շրջանագիծ:

**Խաղի ընթացքը՝** աշակերտները կանգնում են շրջանագծի երկայնքով:

Երաժշտության ներքո պարային շարժումներ անելով՝ քայլել շրջանագծով:

Խաղավարը հանկարծակի անջատում է երաժշտությունը: Աշակերտները արագ կքանստում են «վերածվելով սնկերի»: Վերջին կքանստողը դուրս կգա խաղից: հաղթող կճանաչվի վերջին՝ ամենաուշադիր և ճարպիկ «սունկը»:

#### 5. ԾԱՂԻԿՆԵՐԸ

**Խաղի նպատակը՝** ուշադրության, արագ արձագանքելու կարողության զարգացում:

**Խաղի ընթացքը՝** խաղի բոլոր մասնակիցներին տրվում են ծաղիկների անվանումներ:

**Հրահանգ՝**

— Պատկերացրե՛ք դուք բոլորդ ծաղիկներ էք: Խաղավարն ասում է.

— Ես եղա պարտեզում, տեսա շա՛տ ծաղիկներ, բայց «վարդ» այստեղ չկար:  
«Վարդը» պետք է անմիջապես պատասխանի.

—Ո՛չ ես այստեղ էի, բայց ա՛յ «մեխակն» այստեղ չէր:

—Ո՛չ,— պետք է պատասխանի «մեխակը»,— Ես այստեղ էի, բայց ա՛յ  
«երիցուկը» չկար. . .

Հաջորդը խոսելու է «երիցուկը» և այդպես շարունակ: Նրանք, ովքեր կուշացնեն պատասխանը, դուրս կգան խաղից:

## 6. ՀԵՏԱԽՈՒՅԶԸ

**Խաղի նպատակը՝** Ուշադրությունը երկար ժամանակ կենտրոնացնելու կարողության զարգացում, գույների ուսուցանում:

**Խաղի ընթացքը՝** ընտրվում է «հետախույզ»: Նա դուրս է գալիս սենյակից:

**Հրահանգ՝** Երեխաները նստում են շրջանաձև և յուրաքանչյուր երեխայի տրվում է մի գույն: Ներս է մտնում «հետախույզը» և հայտարարում.

— Գողություն. . . գողացել են ոսկե մատանի: Ես գիտեմ, որ այն «Կարմիրի» մոտ է. . .

— Ո՛չ, — պետք է պատասխանի «Կարմիրը»,—այն ինձ մոտ չէ, այլ «Կանաչի». . .

— Ո՛չ, — անմիջապես մեջ կրնկնի «Կանաչը», — ես մատանի չունեմ: Այն գողացել է «Կապույտը». . .

Հաջորդը պետք է պատասխանի «Կապույտը» և այսպես շարունակ: Միավիճակ կամ պատասխանն ուշացնող գույնը կլքի խաղը:

## 7. ՕԴՈՒՄ, ՋՐՈՒՄ, ՑԱՄԱՔՈՒՄ

**Խաղի նպատակը՝** Ուշադրության զարգացում, բնագիտական գիտելիքների հարստացում

**Խաղի ընթացքը՝** Մեծահասակներից ընտրվում է խաղավար:

**Հրահանգ՝** Կանգնում են դեմքով դեպի խաղավարը: Խաղավարը արտասանում է տարբեր կենդանիների և թռչունների անվանումներ: Օդում ապրող թռչնի անուն լսելիս, օրինակ՝ ծիծեռնակ, պետք է բարձրանան ոտնաթաթերին՝ թափահարելով ձեռքերը: Ցամաքում ապրող կենդանու կամ թռչնի անուն լսելիս, օրինակ՝ կատու, լոր, պետք է ձեռքերը մեկնեք առաջ, իսկ ջրային կենդանիների անուններ լսելիս, օրինակ՝ կետ, մեղուզա, պետք է կքանստեն: Խաղավարը իր շարժումներով փորձում է շփոթեցնել: Նրանք, ովքեր կդանդաղեն կամ կշփոթեն շարժումները, դուրս կմնան խաղից:

## **ԴԱՄԲ ՊԼԱՆ**

**Դասարան՝** I ա **Ուսուցիչ՝** Ասատրյան Քնար  
**Առարկա՝** Մաթեմատիկա **Ամսաթիվ՝** 12. 10. 2022թ.  
**Թեմա՝** «Մեկ» թվի գրությունը թվանշանով  
**Տիպ՝** Համակցված  
**Նպատակ՝** Ճանաչի, կարդա և գրի մեկ թիվը թվանշանով

- Ընդհանրացնել մեկ թվի մասին ունեցած գիտելիքները:
- Ձևավորել լսելու և դիտարկելու հմտություններ:
- Մշակել համագործակցային հմտություններ:
- Դրսևորել մտքի ճկունություն:
- Պատկերացնի առարկաների դասավորությունը հարթության վրա և տարածության մեջ:
- Կարողանա գրել մեկ թիվը թվանշանով:
- Կարողանա կատարել պարզ չափումներ հաշվեձողիկների օգնությամբ:

**Ակնկալվող վերջնարդյունք՝** կճանաչի, կկարդա և կգրի մեկ թիվը  
թվանշանով:

**Գնահատում՝** ձևավորող գնահատման բաղադրիչներով

**Մեթոդ, հնար՝** խաղային տեխնոլոգիաների կիրառում / դոմինո, քարտեր, փազլ /

**Ռեսուրս՝** քարտեր, դոմինո, փազլ, հաշվեձողիկներ, թել, մկրատ,  
համակարգիչ,

տեսագրիչ

**Գործունեություն՝**

**Կազմակերպչական մաս՝** նախապատրաստվել դասին

**Խթանում՝** «Չարաձճի մեկ թիվը» հնարի կիրառում

Ո՞րն է ամենափոքր միանիշ թիվը:

Ո՞րն է ամենամեծ միանիշ թիվը:

Անվանի՛ր 6 – ի հաջորդը:

Անվանի՛ր 3 – ի նախորդը:

Անվանի՛ր 5 – ից 2 – ով փոքր թիվը:

Գտի՛ր այն թիվը, որը 3 – ով մեծ է 4 – ից:

Գտի՛ր 5 – ի և 7 – ի միջև գտնվող թիվը:

**Խնդիր 1** Առաջին օրը սկյուռն իր փչակ բերեց 2 կաղին, իսկ երկրորդ օրը՝ 3 կաղին: Քանի՞ կաղին բերեց սկյուռը երկու օրում:

**Խնդիր 2** Սառույցի վրա թռչկոտում էին 6 պինգվին: Նրանցից 2 – ը թռան ջուրը՝ ձուկ որսալու: Քանի՞ պինգվին մնաց սառույցին:

Երկրաչափական պատկերների կրկնությունն խաղի միջոցով (խմբային աշխատանք)

Ուսուցչի գործունեություն	Աշակերտի գործունեություն
<ul style="list-style-type: none"> <li>• Ո՞ր պատկերն է խնձորի մեջ</li> <li>• Ի՞նչ գույն ունի ձվածիրը:</li> <li>• Ո՞ր մրգի մեջ է շրջանը:</li> <li>• Նարինջի մեջ գտնվող պատկերի մասին ի՞նչ գիտենք:</li> <li>• Քառակուսին ունի. . .</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Պատասխանում են հարցերին</li> <li>• Ուղղանկյան հանդիպակաց կողմերը հավասար են;</li> <li>• 4 հավասար կողմ</li> </ul>

**Իմաստի ընկալում՝** պազլի հավաքում (խմբային աշխատանք)





Ուսուցչի գործունեության ուև	Աշակերտի գործունեության ուև
<ul style="list-style-type: none"> <li>• Ի՞նչ ենք սեսնում նկատում:</li> <li>• Քանի՞ սոջ կա</li> <li>• Էլ ինչն է մեկը:</li> <li>• Հաշվե՛ք սզնվամորիները:</li> <li>• Քանի՞ մեղու կա</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Պատասխանում են հարցերին</li> </ul>

Աշխատանք դասագրքով.


- ❖ Ընկալել տալ մեկ միավորը

Ֆիզկուլտ դադար - մուլտֆիլմի դիտում

- ❖ Մեկ թվի գրությունը
- ❖ « Դոմինո » խաղի կիրառում. քարտերի միջոցով
- ❖ Խաղ շրջաններով
- ❖ Հաշվեձողիկներով ստանալ համապատասխան պատկերը
- ❖ Հաշվեձողիկների օգնությամբ չափել թելի երկարությունը և կտրել

**Կշռադաստում** (անդրադարձ)՝ բաժանել քարտեր՝ երեխաները կամրապնդեն

մեկ թվանշանի գրությունը ( խմբային աշխատանք )



## *ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ*

Աշխատանքի արդյունքն լիարժեք է, ոչ թե այն ժամանակ, երբ դասարանն է յուրացրել նյութը, այլ յուրացրել է յուրաքանչյուր աշակերտ: Իմ առաջ դրված խնդիրը լուծելու համար դիտարկել եմ մանկավարժության մեջ ընդունված ուսուցման և ընդհանուր՝ ավանդական մեթոդները, հնարները, վարժությունների համակարգները, և խաղային ուսուցման արդյունավետ միջոցները: Աշխատանքի ընթացքում պարզել եմ հետևյալը. խաղային տարրերի ներմուծումը որպես կանոն ակտիվացնում և հագեցնում է հնարավոր առավելագույն կենտրոնացմանն ու ուշադրությունը:

Խաղերը բազմաթիվ են և բազմազան, սակայն խաղերի ճիշտ ընտրության և կազմակերպման դեպքում դրանք անդավաճան զինվորների նման կծառայեն աշակերտներին:

Իմ հետազոտության արդյունքը լիարժեք կերևա մայիս ամսին, քանի որ դասավանդում եմ I դասարանում և դեռ շատ երկար աշխատանք կա նպատակներին ու վերջնարդյունքներին հասնելու համար: Այնուամենայնիվ այս կարճ ժամանակահատվածում կարողացա աշխատանքի ընթացքում պարզել՝

- Խաղը հետաքրքրություն է առաջացնում ուսուցանվող նյութի նկատմամբ:
- Խաղը նպատակին է ծառայում, եթե կիրառվում է ճիշտ ժամանակին:
- Խաղը ակտիվացնում է աշակերտներին:
- Ճիշտ ընտրված խաղը նպաստում է կենտրոնացմանը ուսուցանվող նյութին:

Դեռ ունեմ նախատեսված երկար աշխատանք և համոզված եմ, որ մայիս ամսին կքաղեմ իմ աշխատանքի պտուղները:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ինչպես խթանել սովորողների ներառումը դասարանում - 2017

Հեղինակներ՝ մ. գ. թ. դոցենտ Սվազյան Ա. Հ.

Ադամյան Հ. Ա. , Գարեգինյան Ա. Ա. ,

Մարգարյան Լ. Հ. և այլք

2. Ընդհանուր հոգեբանություն – 1974 Երևան

Հեղինակ՝ Պետրովսկի Ա. Վ.

3. Игра в учебно – познавательной деятельности младших школьников – 1987

Հեղինակ՝ Амонашвили Ш.

4. 200 խաղ – 2017 Երևան

Հեղինակ՝ Բալայան Աստղիկ

# Հավելված

